

ԼՈՒԻՉՎԻԼԻ ՄԷՋ ՅՈՅՑԻ ԸՆԹԱՅՔԻՆ ԿՐԱԿՈՑ. ՎԻՐԱԿՐՈՒՄԸ ԵՆ 2 ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

Միացեալ Նահանգներու Զենթաքի Նահանգի Լուիզիոն քաղաքին մէջ բողոքի ցոյցի ընթացքին, անյայտ անձեր կրակ բացած են, այդ պատճառով ալ երկու ոստիկաններ վիրաւորուած են: Այս մասին կը յայտնէ տեղւոյն «Ու.Էլ.Քէ.Ուայ.» պատկերասփիւռի կայանը՝ յղում կատարելով իրաւապահ մարմիններուն: ԹԱՍՍ լրատու գործակալութեան համաձայն, քաղաքի ոստիկանութեան բաժնիի ներկայացուցիչները Նահանգի լրագրողներուն յայտնած էին, թէ միայն 1 ոստիկան վիրաւորուած է: Լուիզիոն մէջ «Էֆ.Պի.Այ.»-ի բաժանմունքի թուիթըրեան էջը կը հաղորդէ, որ մասնաշաղկապ ուժեր ուղարկուած են այն վայրը, ուր վիրաւորուած էին ոստիկանները: «Էֆ.Պի.Այ.»-ի աշխատակիցները հետաքննութեան գործին մէջ պիտի համագործակցին տեղւոյն ոստիկանութեան հետ:

ՎԱՐՉԱՊԵՏ ԱՏԻՊ ԱՅՍՕՐ Կ'ԱՅՑԵԼԷ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Կառավարութեան կազմութեան նպատակով ի գործ դրուած ճիգերուն շրջագծին մէջ, վարչապետ Մուսթաֆա Ատիպ այսօր կ'եսորին պիտի այցելէ հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի, որուն հետ պիտի քննարկէ երկուսն իր հանդիպումին արդիւնքները:

Միւս կողմէ, երէկ կ'եսորէ ետք վարչապետ Ատիպ ընդունեց խորհրդարանի նախագահի քաղաքական օգնական, երեսփոխան Ալի Յասան Խալիլ ու Յըզպալլայի ընդհանուր քարտուղարի քաղաքական օգնական Յիւսէյն Խալիլը, որոնց հետ քննարկեց կառավարութեան մէջ ելեմուտքի նախարարին ինքնուրոյնը:

Շիի երկեակնի աղբիւրները հաստատեցին, որ զոյգ Խալիլներուն եւ վարչապետ Ատիպի հանդիպումը եղած է դրական՝ անելցնելով, որ խորհրդակցութիւններն ու քննարկումները պիտի շարունակուին:

ԷՐՏՈՂԱՆ 2 ԱՌԻԹՆԵՐՈՎ ԱՆԳՐԱԳԱՐՉԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԱՐՅԱՆԻ ԽՆԴԻՐԻՆ



Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան 22 սեպտեմբերին երկու տարբեր խօսքերու մէջ անդրադարձած է Յայաստանին: Այս մասին կը հաղորդէ «Էրմենիհապեր» կայքը:

Էրտողան առաջին խօսքը արտասանած է թուրք նախարարներու հետ հանդիպումէն ետք: Ան իր խօսքին մէջ հայկական նիւթին անդրադարձած է Երուսաղիմի վերականգնման քաղաքականութեան հակադրութեան ծիրին մէջ:

Շար.ղ՝ էջ 3

ՍՊԱՆԻՈՅ ԾԵՐԱԿՈՅՏԸ ՎԱԵՐԱՅՈՒՑ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ



Սպանիոյ Ծերակոյտը 23 սեպտեմբերին վաերացուց Յայաստան-Երուսաղիմի Միութեան Գերագործարարական Եւրոպայի եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը:

«Արմենիփրես»-ին այս մասին յայտնեցին Յայաստանի արտաքին գործոց նախարարութենէն:

Յայաստան-Երուսաղիմի Միութեան Գերագործարարական Եւրոպայի եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը վաերացնելուն կողմ քուէարկած է 243 խորհրդարանական, դեմ քուէարկողներ չեն եղած:

ՆՇԵԼՈՎ, ՈՐ ԹՈՒՐԵԿԱ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՅԵՏԱԶԳՈՒՄԸ Է ԵՒ ՈՉ ԹԵ ԶՆՁՈՒՄԸ

ԹՈՒՐԵ-ԻՐԱՆԵԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱԹԱՐԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Իրանի արտաքին գործոց նախարար Մոհամետ Շաւառ Չարիֆ «Սփոյթ»-ի հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց, որ Թուրքիա իր այցելութիւնը չէ ջնջուած, ինչպէս նախապէս լրատուամիջոցներ հաղորդած էին, այլ յետաձգուած է, ինչպէս նաեւ նախատեսուած հանդիպումը միայն Թեհրանի եւ Անգարայի միջեւ եր:

«Այն, ինչ որ տեղի պիտի ունենար, երկկողմանի հանդիպումի համար Թուրքիա այցելութիւն մըն է, որ մեր մօտ գոյութիւն ունեցող արգելքներուն պատճառով յետաձգուեցաւ եւ ոչ թէ ջնջուեցաւ... ինչպէս նաեւ յետաձգուեցաւ Պոլսոյ մէջ իրանեան հիւպատոսարան բանալու ծրագիրը», ըսաւ Չարիֆ:

«Զաթարցիներուն հետ երկկողմանի շատ լաւ յարաբերութիւն ունիլը եւ լրջօրէն պիտի շարունակենք այդ յարաբերութիւնը», անելցուց ան:



Ինչ կը վերաբերի Զաթար-Թուրքիա-Իրան եռակողմանի որբէ գործակցութեան կարելիութեան, Չարիֆ ըսաւ, որ Թեհրան կը շարունակէ գործակցութեան քաղաքականութիւնը:


Շար.ղ՝ էջ 3

ՊԱՔՈՒ ԶԱԽԱՐՈՎԱՅԻ «ՆԿԱՏՈՂՈՒԹԵՆԷՆ» ԵՏՔ ԽՄԲԱԳՐԱԾ Է ՂԱՐԱՔԱՂԵԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԼԱԻՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ազրայեճան ստիպուած եղած է փոփոխութիւն կատարել Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի եւ Ազրայեճանի խորհրդարանի նախագահ Սահիպա Կաֆարովայի մտակոմէն հանդիպումին վերաբերեալ հաղորդագրութեան սկզբնական բնագիրին մէջ այն բանէն ետք, երբ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Չախարովան յայտարարած է, որ Ազրայեճանի խորհրդարանի մամլոյ ծառայութիւնը Լաւրովի խօսքերը ճիշդ չէ մեկնաբանած: Այս մասին կը հաղորդէ «Ի.Էլ.Տեյլի» կայքը:

Կը հաղորդուի, որ Ազրայեճանի խորհրդարանի կայքին մէջ հրապարակուած բնագիրին մէջ նշուած է, որ Սերկէյ Լաւրով Յայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի վերջին յայտարարութիւնները դարբաղեան տազնապի լուծման հոլովոյթին համար «խոչընդոտ» կոչած է:

«Լեռնային Դարբաղի վերաբերեալ Փաշինեանի յայտարարութիւնները»



րը կը խոչընդոտեն տազնապի լուծման հոլովոյթը: Ասիկա Մոսկուայի դիրքորոշումն է: Ռուսական կողմը լուծման հոլովոյթին մէջ հանդէս կու գայ Ազրայեճանին հիւսկ գրաւեալ շրջաններու վերադարձին, խաղաղապահներու տեղակայման եւ փոխադրահաղորդակցային համակարգի վերականգնման կողքին», խորհրդարանի կայքին վրայ հրապարակուած բնագիրին համաձայն, ըսած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը:

Շար.ղ՝ էջ 3

ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ ՍԱԼՍԱՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ՝

«ՈՒԱՇԻՆԿԹԵՆԻ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՈՐԵՒԷ ԱՐԳԻՒՆՔ ՊԻՏԻ ՉՏԱՅ»

Կ'ԸՍԷ ԹԵՅՐԱԸ

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Սայիտ Խաթիպազաւտ յայտնեց. «Սեւուտական Արաբիան, որ հաւատարմօրէն անհաբեկական խմբաւորումներու գաղափարախօսութեան հիմն ու արմատը, ինչպէս նաեւ շրջանին մէջ անհաբեկութեան գլխաւոր ելեմուտական ու գումակային աջակիցն է, տարիներէ ի վեր իրականութիւններէ փախուտ տալու եւ իր ոճիւրներուն պատասխանատուութիւնը չտանձնելու քաղաքականութիւն կը վարէ»:

Խաթիպազաւտ յայտնեց. «Սեւուտական վարչակարգին՝ Իրանի վրայ առաւելագոյն ճնշումի ձախող քաղաքականութիւնը շարունակելու մէջ Միացեալ Նահանգներու հետ ընթացաւ ու աջակցիլը, բնագրաւոր փոխակազմութեան հետ յարաբերութիւնները ամրապնդելու փորձը եւ այդ երկրին գաւառներուն գրպաններէն ուրիշներուն միջնաւոր տղաքներ վճարելը արդիւնքի պիտի չհասցնէ, այլ անոնք Սեւուտական Արաբիան վերածեցին արաքական երկիրներուն մէջ համեստ երկրի»:



«Սեւուտական Արաբիան անհաբեկական ու հաւատարմօրէն խմբաւորումներուն կեդրոնատեղին ու ապաստանարանն է», նշեց նախարարութիւնը՝ անելցնելով. «Եմէնի մէջ Սեւուտական Արաբիոյ մարտական եւ քաղաքական իրեայաջորդ պարտութիւնները զայն մղեցին Իրանի դէմ գառնելու»:

Շար.ղ՝ էջ 3

ԻՃԻՆԱՆ ՍԱՂԱԾԷԼԵԱՆ. «8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՆՐԱՎԱԿԱՐԳ ԳԼԽԱՌՈՐ ՊԱՇԱՆՁԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ»



«Ազատութիւն» ծայնասփիւռի կայանին հետ ունեցած գրոյցին ընթացքին ՅՅԳ Յայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան յայտնեց, որ 8 հոկտեմբերին Ազատութեան հրապարակին վրայ նախատեսուած համապետական հանրահաւաքի գլխաւոր պահանջը արտահերթ խորհրդարանական ընտրութիւններն են, որոնց հասնելու համար անհրաժեշտ է վարչապետին հրաժարականը:

Յայ յեղափոխական դաշնակցութիւնը բացառեց, թէ որբէ կապ կայ Գազիկ Ծառուկեանի կալանաւորման հարցով դատական նիստին եւ հանրահաւաքին միջեւ:

«Այս ամբողջ ժամանակահատուածին բազմաթիւ անգամներ ըսած ենք, որ, այո՛, երբ արտակարգ դրութիւնը վերանայ, մենք պիտի օգտուինք նաեւ հանրահաւաքներ, երբ, ցոյցեր կազմակերպելու մեր սահմանադրական իրաւունքն է: Այս ժամանակահատուածին մենք նաեւ պարբերաբար խօսած ենք այդ մասին եւ ընդամենը քանի մը օր առաջ որոշած ենք հանրահաւաքի օրը, հիմա ատիկա կապելը անմիջական դատավարութեան հետ ճիշդ չէ»:

Շար.ղ՝ էջ 2

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԻԱԿ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԳԱՏԱՌՈՐ ԵՐՈՒՄԵՆԻ ԽՈՒՆԴԿԱՐԵԱՆՆ Է



Սահմանադրական դատարանի նախագահի միակ թեկնածուն Սահմանադրական դատարանի դատաւոր Երուսաղի Խուրդարեանն է: Այդ մասին լրագրողներուն հետ ունեցած գրոյցին ընթացքին յայտնեց Սահմանադրական դատարանի նորընտիր դատաւոր Ետկար Շաթիրեան՝ անելցնելով, որ նիստը պիտի շարունակուի 25 սեպտեմբերին:

Շար.ղ՝ էջ 3

ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԱՆ ՌՈՒՎԱՆԻՆ ԱՆԿԱՍՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՈՒՄԸ ԱՌԻԹՈՎ ՇՆՈՐՀԱՌՐԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏԸ



Իրանի նախագահ Յասան Ռուհանի Յայաստանի անկախութեան վերականգնման օրուն առիթով շնորհաւորական ուղերձներ յղեց Յայաստանի նախագահ Արմեն Սարգսեանին եւ Յայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին:

«Արմենիփրես» յղում կատարելով Իրանի նախագահի պաշտօնական կայքին, տեղեկացուց, որ Յասան Ռուհանի յոյս յայտնեց, որ երկու ժողովուրդներու պատմական, մշակութային, հասարակական կապերու հիման վրայ եւ երկու երկիրներու պաշտօնատար անձերու ջանքերուն լոյսին տակ Թեհրան-Երեւան յարաբերութիւնները ալ անելի պիտի խորանան ու զարգանան՝ ապահովելով երկու ժողովուրդներուն շահերը:

Շար.ղ՝ էջ 2

ՊԱՍՏԱՅԻ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՔՆՆԱՐԿԵՑ ԱՊՕՐԻՆԻ ԳԱԿՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԳԻԼԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Հանրապետության նախագահի գործընկերները և Միջին Արևելքի տարածքային հարավարևելյան մարզի մարտնչական ամսվարկին մեջ 100 միլիարդ լ. ոսկիի արտակարգ պայմանագիրը կը բացուի, որպեսզի կարելի ըլլայ 4 օգոստոսի Պեյրուսի նախագահի պայթումէն տուժածներուն նիւթական հատուցումները կատարել՝ հիմնուելով լիբանանեան բանակի հրամանատարութեան մշակած գործիքակազմին եւ ճշդած առաջնահերթութիւններուն վրայ:

Միւս կողմէ, նախագահ Աուն երէկ նախագահական պալատին մէջ նախագահեց ապահովական նիստի մը, որուն ներկայ գտնուեցան հրաժարեալ վարչապետ Յասսան Տիպա, փոխվարչապետ, պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար Չէյնա Աքր, ներքին գործոց նախարարի պաշտօնակատար Մոհամետ Ֆահմի, լիբանանեան բանակի հրամանատար գործընկեր Աուն, հանրապետութեան նախագահութեան ընդհանուր տնօրէն Անթուան Շէյր, նախարարաց խորհուրդի ընդհանուր քարտուղար, դատաւոր Մահմուտ Մաքքիէ, Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն Ապպաս Իպրահիմ, Ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն հազարապետ-գործակար Իմատ Օսման, Պետական անվտանգութեան ընդհանուր տնօրէն հազարապետ-գործակար Անթուան Սալիպա, նախագահ Աունի ապահովական եւ զինուորական հարցերու խորհրդատու գնդապետ-գործակար Պուլոս Մաթար եւ լիբանանեան ծովուծի հրամանատար գնդապետ-գործակար Յայսամ Տան-Նաուր:

Նիստին ընթացքին քննարկուեցան ապօրինի զաղթականութեան վերաբերող հարցեր, յատկապէս Թրիփոլիէն ծովու ճամբով Կիպրոս ուղղուող գաղթականներու հարցը եւ նմանատիպ դէպքերու արձանագրած աճն ու անոց պատճառած զոհերը, որոնք բոլոր տարիքներէ են:

Նախագահ Աուն ընդգծեց այս հարցն ու անոր տուն տուող պատճառները լուծելու անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ կոչ ուղղեց պայքարելու նման ապօրինի դրութեամբ գաղթը կազմակերպող ցանցերու դէմ:

Տիպա իր կարգին անհրաժեշտ նկատեց, որ ապահովութեան ուժերը կարելի եղածին չափ արագ կերպով համագործակցին եւ վերջ դնեն ապօրինի զաղթականութեան:

ԱՔՐ ՄԱՄՆԱԿՑԵՑԱԻ ՊԱՍՏԱՅԻ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ ԵՒ ԱՅՑԵԼԵՑ ԱՅՆ ԹԻՆԷ



Փոխվարչապետ, պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար Չէյնա Աքր երէկ մասնակցեցաւ Պապատայի նախագահական պալատին մէջ գումարուած ապահովական նիստին, որուն նախագահեց հանրապետութեան նախագահ գործընկեր Աուն: Նիստին ներկայ գտնուեցան հրաժարած կառավարութեան վարչապետ Յասսան Տիպա, ներքին գործոց նախարարի պաշտօնակատար Մոհամետ Ֆահմի, ինչպէս նաեւ ապահովական կառուցներու պետեր:

Նիստին ընթացքին քննարկուեցան Լիբանանի ապահովական կացութիւնը եւ լիբանանեան ջուրերէն դէպի այլ երկիրներ ապօրինի կերպով զաղթելու երէնյօրը:

Քննարկուեցան այն միջոցները, որոնք պետք է որդեգրուին՝ կասեցնելու համար ապօրինի գաղթը, ինչպէս նաեւ պարտականութիւն տրուեցաւ Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէնութեան՝ խորհրդակցելու կիպրական իշխանութիւններուն հետ եւ պետք եղած քայլերուն դիմելու՝ զաղթականներու տունդարձին առումով, ինչպէս նաեւ պարտականութիւն տրուեցաւ բացայայտելու այն ցանցերը, որոնք նման տիպի գաղթը կը կազմակերպեն:

Ապահովական տիպի նիստին ընթացքին որոշուեցաւ նաեւ ծովային սահմաններու հսկողութիւնը խստացնել:

Շարք՝ էջ 3

ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՀՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՀԱՍԱԻ 32.805-Ի, ԻՍԿ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝ 329-Ի ՄԱԺՁՈՒՊ «ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ԳՊՐՈՅՆԵՐՈՒՆ ՎԵՐԱՄՈՒՏԸ ՅԵՏԱԶԳՈՒԵՑԱԻ 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020-ԻՆ»

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երէկ Լիբանանի մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 32.805-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 1027 նոր վարակուածներ, որոնցմէ 1006-ը՝ տեղացիներ, իսկ 21-ը՝ Լիբանան վերադարձած քաղաքայիններ:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Քորոնա» ժահրով վարակուած 329 պարագաներ մահացած են:



Կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարարի պաշտօնակատար Թարեք Մաժուպ երէկ երեկոյան յայտնեց, որ պետական եւ սեփական ղրղոցներուն պարագային վերամուտը յետաձգուած է 12 հոկտեմբեր 2020-ին:

Նշեց, որ նախքան այս որոշումը, «Քորոնա»-ի Լիբանանի ազգային շտապ յանձնարարած էր դպրոցներուն վերամուտը 14 օրով յետաձգել՝ նկատի ունենալով, որ «Քորոնա»-ի ժահրով վարակուածներուն համեմատութիւնը 8 առ հարիւրով բարձրացած է:

Պետք է անելցնել, որ Լիբանանեան Կարմիր խաչի ընդհանուր տնօրէն Ժորժ Զըթթան երէկ յայտնեց, որ «Քորոնա»-ի համաճարակին լոյսին տակ դպրոցներուն կացութիւնը զգայուն է:

Առողջապահութեան նախարարի

ԻՇԽԱՆ ՄԱՂԱԹԷԼԵԱՆ. «8 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ . . . »

Շարունակուած Ա. Էջէն

Մենք ալ հակառակը կ'ըսենք, որ այս իշխանութիւնը կը շարունակէ այդ ճամբով, այդ քրեական գործերով, հետապնդումներով փորձել լռեցնել իր ընդդիմախօսները եւ ընդդիմադիր դաշուը», յայտնեց Սաղաթէլէան:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը կը կարծէ, թէ քաղաքական 3 ուժերը պիտի կարենան բազմամարդ հանրահաւաք կայացնել, քանի որ օրակարգը օղէն չեն առած, այլ զայն կառուցած են հանրային դժգոհու-


թիւններու եւ իրենց գնահատումներու հիման վրայ: Դաշնակցութեան Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլէանի համոզումով՝ իշխանութիւնը բոլոր ոլորտներուն մէջ ձախուղած է կառավարութիւնը եւ խորհրդարանը այլեւս ի վիճակի չեն դիմադրուելու երկրին դիմաց ծագած մարտահրաւերները, կայ իրական դժգոհութիւն հասարակական տարբեր շերտերու մէջ, եւ մարդիկ փողոց պիտի իջնեն:

ՆԱԽԱԳԱՀ ՀԱՍԱՆ ՌՈՒՀԱՆԻՆ ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ . . .

Շարունակուած Ա. Էջէն

«Անկասկած, երկու երկիրներու մշակութային, հասարակական ընդհանուր կապերը եւ բարեկամական յարաբերութիւնները պարտաւոր հող պիտի ապահովեն յարաբերութիւններու զարգացման եւ խորացման հա-

մար, եւ երկու երկիրներու ժողովուրդները պիտի կարենան աշխարհի երկիրներուն միջեւ կառուցողական եւ բարեկամական յարաբերութիւններու օրինակ ծառայել», նշեց Իրանի նախագահը:



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԵՐՈՒ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԵՐԵՔ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆՆԵՐՈՒ ՄԱՏՉԵԼԻ ՈՒ ՈՐԱԿԵԱԼ ՈՒՍՄԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԻՒՆ

Լիբանանի ընկերային-տնտեսական ճգնաժամը եւ ստոր հետեւանքով հայ համայնքին դիմագրուած դժուարութիւնները ծանրակշիռ տարողութիւն ունին: Կրթական համակարգը իր կարգին կը դիմագրուէ բազմազան դժուարութիւններ, սակայն կը մնայ դարբնոցը հայ աշակերտի հոգեմտաւոր դաստիարակութեան: Հայկական կրթօճախին պարտականութիւնն է իրել-րայաշորդ տարիներու ընթացքին մատուցել սերունդին ապահով զարգացող դաստիարակութիւն եւ ուսում՝ օգտագործելով 21-րդ դարու արհեստագիտական լաւագոյն միջոցները, ինչպէս նաեւ անվտանգ միջավայր, եւ պատրաստել ողջամիտ հայորդիներ:

Առ այդ, **Հայ կաթողիկէ պատրիարքութիւնը՝** իրատես ըլլալով տիրող կացութեան, ունենալով ապագայի տեսլական եւ ապահովելով իր բարերարներու, բարեկամներու եւ բարեսիրական կազմակերպութիւններու աջակցութեան, ինչպէս նաեւ ծնողներու արժանապատուութեան եւ պատասխանատուութեան ոգիի խոր գիտակցութեան, կը յայտարարէ, որ իր գոյգ բարձրագոյն վարժարաններուն՝ **Մեսրոպեանի եւ Սուրբ Խաչ-Յարապոյեանի** տնօրէնութիւնները, յառաջիկայ երեք տարեշրջաններու ընթացքին, սերտուած ու դիւրամատչելի պայմաններ պիտի ստեղծեն ծնողներուն համար, **որպէսզի այս եւ յառաջիկայ երկու տարեշրջաններուն՝ ծնողները իրենց զաւակներուն համապատասխան դասարաններու կրթաթոշակին մասնակցին մէկ երրորդով միայն:**

Կրթութեան մակարդակի ապահովումը կը ապահանջէ բոլորին կողմէ գոհողութիւն եւ համագործակցութիւն: Մեր նպատակն է շարունակել մեր վսեմ առաքելութիւնը, եւ նուաճելով փոթորիկը՝ մեր զաւակները ապահով հասցնել դէպի ափ:

Չույգ վարժարաններու տնօրէնները պատրաստ են հայրական հոգածութեամբ քննելու յատուկ պարագաները:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԵՐՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՏԱՐ ՖԱԹՈՒԱՅԻ ՄԵՋ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՄՈՎ ԴՐԱԿԱՆ ՄԹՆՈՒՈՐՏ ԿԱՅ, ԵՒ ՄԵՆՔ ԿԸ ՉՕՐԱԿՑԻՆՔ ՖԱՐՆԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՆ»

ՇեճՏԵՑ ԱՆԻ ՀԱՍԱՆ ԽԱԼԻԼ

Հանրապետութեան միւլթիք շէյխ Ապտել Լաթիֆ Տըրիան երէկ Տար Ֆաթուայի մէջ ընդունեց Ազատագրում եւ բարգաւաճում պլոքի մէկ պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ երեսփոխան Ալի Հասան Խալիլի, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները:



Հանդիպումէն ետք Խալիլ ըսաւ. «Ինչպէս խորհրդարանի նախագահ Նէպիի Պըրրիի հաստատած է, մենք անշեղ կը մնանք մեր յանձնառութենէ՝ ֆրանսական նախաձեռնութիւնը ամբողջական կերպով յաջողցնելու առումով: Մենք պատրաստ ենք գործարդելու բարեկարգումները: Կառավարութեան կազմութեան առումով դրական մթնոլորտ կայ, եւ մենք այդ իմաստով առաւելագոյն չափով պատասխանատու կը զգանք»:

Խալիլ նկատել տուաւ, որ բոլորի շահերուն կը ծառայէ, որ լաւատես ըլլան, որովհետեւ անոց լաւատեսութիւնը հիմնուած է կարգ մը տուեալներու վրայ: «Մեր աշխատանքը հիմնուած է սահմանադրութեան վրայ, որ պահպանած է երկրին կառուցածքն ու հասարակաշրջանները: Մենք կառչած կը մնանք Ազգային ուխտին, սահմանադրութեան եւ ազգային միասնականութեան, ինչպէս նաեւ լիբանանցիներուն մտահոգութիւնները փարատող գործիքակազմերուն», հաստատեց նա:

Խալիլ շեշտեց, որ Պըրրի իր դերակատարութենէն երբեք չէ հրաժարած եւ ան բոլորին հետ հաղորդակցութեան մէջ է, կ'որոնէ այնպիսի ելքեր, որոնք կ'երաշխաւորեն բոլոր ուժերուն դերակատարութիւնը, ինչպէս նաեւ կառավարութեան վստահութեան ընդէ շնորհումը: «Մենք յանձնառու ենք կառավարութեան կազմութեան զօրակցելու եւ ամէն ձեւով վարչապետ Մուսթաֆա Ատիպին օժանդակելու», ըսաւ ան:

Խալիլ հաստատեց, որ իրենք պատրաստ են քաղաքական բոլոր ուժերուն հետ գործակցելու:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

- ՄԻԱՑԵԱԼ Լահանգներու արտաքին գործոց նախարարութեան քաղաքական հարցերու տեղակալ Տեյլիտ Յէյլ երէկ յայտնեց, որ լիբանանեան բանակին ամերիկեան օժանդակութիւնը կը կատարուի Յըզպալլայի ահաբեկչութեան դէմ ամերիկեան վարչակազմին ճշդած ռազմավարութեան շրջագիծին մէջ: Յէյլ շեշտեց, որ երբ լիբանանցի ղեկավարները յանձնառու մաս կատարուելիք փոփոխութիւններուն, ապա Միացեալ Նահանգներ անհրաժեշտ օժանդակութիւնները պիտի մատուցեն Լիբանանին:
- ՄԱՐՈՒՆԻ համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երէկ Տիմանի մէջ ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Պրուսո Ֆուշէն: Ռայի պատրիարքին այցելեց նաեւ երեսփոխան Ժան Օպէյտ, որ պատրիարքին հետ քննարկեց լիբանանեան եւ շրջանային իրադարձութիւնները:
- ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ շինութեան խորհրդարանական յանձնախումբի նախագահ, երեսփոխան Լազիկ Նաժմ յայտնեց, որ Պեյրուսի նախահանգիստին մէջ կան 49 վտանգաւոր բեռնարկեր, որոնք 2009-էն ի վեր կը գտնուին նախահանգիստին մէջ, եւ որոնք հարցին հետապնդումով ոչ ոք կը զբաղի: Ան շեշտեց, որ Պեյրուսի նախահանգիստի պայթումին մասին բացուած հետաքննութիւնը բոլոր կողմերը պետք է ներառէ:
- ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ դիմադրութեան պլոքի նախագահ, երեսփոխան Մոհամետ Ռաատ երէկ այցելեց Հարոնֆ, ուր ցաւակցութիւն յայտնեց լիբանանեան ֆուլթալի գոհուած աստղ Մոհամետ Աթուփի ընտանիքին: Ռաատ շեշտեց, որ իրենք դատական եւ օրինական առումով պիտի հետեւին այդ թղթածրարին, մինչեւ որ յանցագործները ստանան իրենց համապատասխան պատիժը:
- ՓԱՂԱՆԳԱՌՈՐ կուսակցութեան ղեկավար Սամի Ժեմալի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Թուրքիոյ դեսպան Հաքմետ Չաքըլը, որուն հետ քննարկեց լիբանանեան եւ շրջանային իրադարձութիւնները:
- ԻՍՐԱԵԼԵԱԼ օդուժը երէկ Զեսրուանի վերէն թռիչքներ գործեց:
- ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ նախկին նախագահ Ամին Ժեմալի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Յորդանանի դեսպան Ռալիտ Հատիւրը, որուն հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները:
- ԱՆԿԿԻՆ Երեսփոխան Հասան Եազուպ յայտնեց, որ նախկին վարչապետներուն կողմէ ֆրանսական զօրակցութիւնը շօշափելի ու զայն շահագործելը՝ մեկզմէկու դէմ, ամօթալի երէնյօք է:
- ՀՉՕՐ հանրապետութեան պլոքը հաստատեց, որ նախարարութիւնները այս կամ այն համայնքին սեփականութիւնը չեն, ինչքան ալ այդ համայնքները հզոր ըլլան:

ՆԵՐԳԱՂԹԻՆ ԿԸ ՀԱՄԱՏԱՐԻ

Հարցումն ուղղուած է Հայաստանի եւ սփիւռքի ղեկավարութիւններուն:

Փաստօրէն 2011-էն մինչեւ օրս՝ Սուրիոյ պատերազմի սկիզբէն մինչեւ 4 օգոստոսի Լիբանանի նահանգիստի պայթումը, գանձան փուլերով թե՛ սուրիահայ եւ թե՛ լիբանանահայ ընտանիքներ ուղղեցան դէպի Հայաստան:

Փաստօրէն սփիւռքի քաղաքական, կրօնական եւ ազգային-հասարակական կազմակերպութիւնները միշտ ալ քաջալերած են, որ թե՛ գաղթելու տրամադրութիւն, փափաք եւ որոշում կայ, պէտք է ուղղուի դէպի հայրենիք:

2011-էն ի վեր բազմահազար սուրիահայեր եւ ներկայիս ալ բազմահարիւր լիբանանահայեր կ'ուղղուին դէպի Հայաստան:

Ներգաղթի ոչ կազմակերպ ալիքը արդէն Սուրիայէն, Իրաքէն, Լիբանանէն եւ Իրանէն անցնող 9 տարիներուն գանձան փուլերով եւ գանձան պայմաններով կը կատարուի:

Սակայն: ա) Հայաստանի պետութիւնը ներգաղթ կազմակերպելու փափաք, կամք, որոշում եւ հեռանկար ունի՞:

Փաստօրէն, անցնող տարիները ցոյց տուին, որ նման որոշում եւ ծրագրում, կազմակերպում աշխատանք գոյութիւն չունի:

Ինչ քան կ'արգիլէ որոշում տալու եւ ծրագրելու նման ազգային գործ մը:

Ինչո՞ւ չկամութիւն կայ պետական մակարդակով: Ներգաղթը կազմակերպելու համար բացի կամքէն ոչ մէկ բան կը պակսի:

Կր՛, նորը հարց է իբրեւ ռազմավարութիւն, սակայն պայմանները մեզի կը ստիպեն, որ մենք պատրաստ ըլլանք ընդունելու, տեր կանգնելու, զօրավիզ ըլլալու, ուղղելու եւ պետական մակարդակով տիրութիւն ընելու բոլոր ներգաղթողներուն:

Ինչ տարի անցաւ քանիչը տարուան անկախ պետութենէն, սակայն ոչ մէկ կառավարութիւն եւ ոչ մէկ վարչակարգ ներգաղթի օրակարգ արծարծեց:

Չե՞ որ մարդկային ներուժի կը հաւատանք:

Չե՞ որ մէկ ազգ մէկ հայրենիք ենք:

Չե՞ որ ծնեք-ծնեքի աւելի բարգաւաճ Հայաստան կ'ունենանք:

2008-ին ստեղծուած սփիւռքի նախարարութենէն մինչեւ 2018 սփիւռքի հարցերու յանձնակատարը Նոյն հարցերով զբաղեցան: Սփիւռքի կազմակերպ գաղութները աւելի այցելելէն, քան անկազմակերպ, նոր կառուցուող կամ աղետահար գաղութներ ուղղուելով:

Լիբանանը, որ սփիւռքի կարեւոր գաղութներէն մէկն է «ակզբուք»-ով: Նահանգիստի աղետէն ետք, երբ Իտալիոյ վարչապետը, Ֆրանսայի նախագահը, եւ այլ պետական առաջին դէմքեր այցելեցին, ինչո՞ւ Հայաստանի պետութեան կողմէ առաջին դէմքերէն մէկը Պէրլուօ չհանդիպեցաւ: Կաթողիկոսարան, հայահոծ թաղամասեր, կառոյցներ, մամուլ, եկեղեցիներ, կրթական-բարեփոխական նախարարութիւններ:

բ.) Սփիւռքը ինչո՞ւ չ'ուզեր ներգաղթ կազմակերպել: Աւելի յստակացնեմ միտքս:

Ինչո՞ւ քննարկումի, ծրագրումի եւ հեռանկարային աշխատանք չի տարուիր սփիւռքի կողմէ, որ Հայաստանի պետութեան հետ ծրագրեն ներգաղթը: Ո՞վ ինչէն կը վախնայ:

Պէտք է յստակ ըլլանք երկուստեք: Մեր ժողովուրդի ֆիզիքական ապահովութիւնը կարմիր գիծ է, իսկ հայրենիքի հետ համադրուած եւ համակարգուած ներգաղթի ծրագրի մշակումը՝ անյետաճգեալ:

Սփիւռքը գլխաւոր «Ս»-ով պէտք է մնայ, ինչպէս Վահէ Օշականը կ'ըսէր, սակայն այսօրուան աղետներուն դիմաց սփիւռքնայնութեան ֆիզիքական ապահովութիւնը ամեն բանէ վեր պէտք է դասուի, եւ այս իմաստով ներգաղթին պէտք է հաւատանք եւ լուրջ ձեռք մտնենանք:

Կրթական, առողջապահական, սննդեղէնի նպաստ եւ այլ նախաձեռնութիւնները շատ շնորհակալ գործ են, բայց հեռանկարային ծրագիր չկայ, այս է հարցը:

Բոլոր երկիրներն ալ օգնութիւն ղրկեցին, բայց մենք պէտք է ներգաղթի ծրագիր ունենանք՝ քսանիկը տարուան փորձառութենէն ետք եւ ինչ տարուան Սուրիոյ, Լիբանանի, Իրաքի ապահովական վերհիմնարկներէն ետք:

Հայահաւաքին՝ Հայաստանի մէջ համախմբուելուն պիտի հաւատանք ուզենք թէ չուզենք, եւ պէտք է անկեղծ, առանց բարոյութեան ներգաղթի ծրագիր մշակենք բոլորս միասին:

ՅԱԿՈՒ ԼՍՏՈՅԵՆ

AFHIL
ARMENIAN MUTUAL FUND
20 Years of Commitment

II The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others II

Mahatma Gandhi

Health Insurance, Travel Insurance, GoodCare Clinic, Car Insurance, Health Clubs, Home Medical Equipment, BOB - Western Union, University and Student Fund, «911» Health Magazine

www.afhil.com | AFHIL Mutual Fund
Bourj Hammoud, Arin Center, 4th Floor | Tel. 011 242 5567

ՎԵՐԱ ԵԱԳՈՒՊԵԱՆ. «ԱՆՀՐԱԾԵՇՏ Է ԶՍՊԵԼ ԹՈՒՐՔԻՈՅ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ»

Միջին Արեւելքի Հայ դատի գրասենեակի պատասխանատու Վերա Եագուպեան «Արմենփրես»-ին հետ ունեցած զրոյցին ընթացքին յայտնեց, որ Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող զարգացումները հաշուի առնելով՝ Հայաստան պէտք է աշխուժ կերպով աշխատի արաբական աշխարհին հետ՝ թե՛ սեփական շահերը յառաջ տանելու, թե՛ Թուրքիա-Ազրայէյան հակաքաղաքական հակազդելու համար:



Վերա Եագուպեանը ընթացքին յայտնեց, որ Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող զարգացումները հաշուի առնելով՝ Հայաստան պէտք է աշխուժ կերպով աշխատի արաբական աշխարհին հետ՝ թե՛ սեփական շահերը յառաջ տանելու, թե՛ Թուրքիա-Ազրայէյան հակաքաղաքական հակազդելու համար:

«Ուղիանուր ամամբ, արաբական աշխարհին հետ յարաբերութիւնները սերտացնելու առումով, ըստ ինձի, Հայաստան թերացած է: Ասիկա տարիներ առաջ պէտք է կատարուէր, մասնաւորապէս որ ատոր համար կար պարտա ինչո՞ւ այդ երկիրներուն մէջ հայկական համայնքները: Այսօր աւելի քան երեքէ Հայաստան գանձան ուղղութեամբ մէջ իր կապերը պէտք է սերտացնէ արաբական աշխարհին հետ՝ հակակշռելով Ազրայէյան-Թուրքիա հակաքաղաքականութիւնը», յայտնեց Վերա Եագուպեան: Ան ընդգծեց, որ այսօր այդ տեսանկիւնէն Հայաստան որեւէ արգելք չունի՝ աւելցնելով, որ վերջերս Հայաստանի արտաքին գործոց նախարար Չոհրապ Մնացականեանի այցելութիւնն ուսուս Եգիպտոս, ուր ունեցաւ բարձր մակարդակի հանդիպումներ: Այդ այցելութիւնն ու հանդիպումները որպէս շեշտարկումով իրենց անդրադարձը գտան արաբական մամուլին մէջ:

«Կը կարծեմ, թէ շրջանին մէջ այս նոր ձեւաւորուող ճակատներուն վրայ Հայաստան պէտք է իր տեղը ունենայ, քաղաքական աշխուժ յարաբերութիւններով կարենայ սերտ կապեր ստեղծել արաբական գլխաւոր ճակատներուն հետ, որպէսզի հակակշռէ Թուրքիոյ եւ Ազրայէյանի հակաքաղաքականութիւնը», յայտնեց Հայ դատի գործիչը: Ան նշեց, որ ասիկա կարեւոր է, մասնաւորապէս որ Ազրայէյանի եւ Թուրքիոյ հակաքաղաքականութիւնը կը շարունակուի՝ ժամանակ առ ժամանակ տարբեր դրսեւորումներ ստանալով: Այժմ ալ ազրայէյանական մամուլին մէջ շրջանառու թեմայերը իբր թէ Հայաստանը, համագործակցելով քիւրտներուն հետ, վարձկաններ կը բերէ Ազրայէյանի ուղղութեամբ յարձակումներ կ'ընէ, որոնց մէջ կը խառնուին Թուրքիան ու իր հակառակորդները զբաղեցնելու կողմնակի կոչուելով: Այսպիսով, տարբեր միջոցներով այնպէս կ'ընէ, որ միջազգային հանրութեան ուշադրութիւնը շեղէ իր իրական կայտակարարէն», ըսաւ ան: Թուրքիոյ ծաւալապաշտական նկրտումները սանձելու առումով Վերա Եագուպեան մատնանշեց Եգիպտոսի, Յունաստանի, Կիպրոսի, Յորդանանի, Իտալիոյ եւ Իսրայէլի կողմէ շրջանային կազմակերպութիւններու նախաձեռնութիւնը: Ասիկա կը նշանակէ, որ այս պետութիւնները կը պատրաստուին կազմելու հակաթուրքական ճակատ՝ փորձելով սանձել Թուրքիոյ ծաւալապաշտական արտաքին քաղաքականութիւնը:

րումներ ստանալով: Այժմ ալ ազրայէյանական մամուլին մէջ շրջանառու թեմայերը իբր թէ Հայաստանը, համագործակցելով քիւրտներուն հետ, վարձկաններ կը բերէ Ազրայէյանի ուղղութեամբ յարձակումներ կազմակերպելու համար: Վերա Եագուպեանի համաձայն, իրականութեան մէջ նման քայլով փորձ կը կատարուի միջազգային հանրութեան ուշադրութիւնը շեղել այն տեղեկութիւններէն, ըստ որոնց, Թուրքիան բաւական կազմակերպուած աշխատանք տարաւ Սուրիայէն Ազրայէյան եւ Լիպիա բազմաթիւ ահաբեկիչներ տանելու՝ խոստանալով դրամական պարգէտ:

«Թուրքիան կ'ընթացայ իր ծաւալապաշտական նկրտումներուն ուղիով՝ Միջին Արեւելք, արեւելեան Միջերկրական: Թուրքիան որեւէ միջոցի կը դիմէ, որպէսզի շրջանը ապակայունացնէ եւ իր հակառակորդները զբաղեցնէ կողմնակի կոչուելով: Այսպիսով, տարբեր միջոցներով այնպէս կ'ընէ, որ միջազգային հանրութեան ուշադրութիւնը շեղէ իր իրական կայտակարարէն», ըսաւ ան: Թուրքիոյ ծաւալապաշտական նկրտումները սանձելու առումով Վերա Եագուպեան մատնանշեց Եգիպտոսի, Յունաստանի, Կիպրոսի, Յորդանանի, Իտալիոյ եւ Իսրայէլի կողմէ շրջանային կազմակերպութիւններու նախաձեռնութիւնը: Ասիկա կը նշանակէ, որ այս պետութիւնները կը պատրաստուին կազմելու հակաթուրքական ճակատ՝ փորձելով սանձել Թուրքիոյ ծաւալապաշտական արտաքին քաղաքականութիւնը:

ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ . . .

Շարունակուած Ա. Էջէն

«Առայժմ քուէարկութիւն տեղի չէ ունեցած: Ինքնառաջադրուած է մէկ թեկնածու: Դատարարներէն մէկը եւս առաջադրեց մէկ թեկնածու, որմէ ետք այդ թեկնածուն ինքնաբացարկ յայտնեց: Ըստ Եուրօթան թեկնածուն մէկն է», յայտնեց Շաթիրեան:

Պատասխանելով լրագրողներուն հարցումին, թէ ո՞վ է թեկնածուն՝ Շաթիրեան նշեց, որ անունը առջանց լրատուամիջոցներուն յայտնի է:

Ըստ Եուրօթան, Շաթիրեան չի երեքեք մամուլին մէջ շրջան ընդոյ այն լուրը, որ

Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Հրայր Թովմասեանի կողմէ առաջադրուած թեկնածուն Աշոտ Խաչատրեանն է, իսկ ինքնառաջադրուած թեկնածուն՝ Խուրդկարեանը:

«Ինքնառաջադրուած թեկնածուն ունեցաւ ծրագրային ելույթ, որուն յաջորդեց հարցուպատասխանը: Դատարարներուն մէկ մասը արդէն իսկ ուղղեցին իրենց հարցումները թեկնածուին: Այլ հարցադրումներ եւս կան», յայտնեց ան:

ԷՐՏՈՂԱՆ 2 ԱՌԻԹՆԵՐՈՎ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Էրտողան շեշտած է. «Անգամ մը ես կը կրկնեմ, որ Սուրիոյ, Լիպիոյ, Եմենի եւ բազմաթիւ այլ մարդկային ճգնաժամներուն մէջ կեղծաւորութիւն, անակզբուքայնութիւն, շահագիտականութիւն ցոյց տուող երկիրները աշխարհի վրայ իրաւունք եւ արդարութիւն պիտի չհաստատեն: Այն, որ Ազրայէյանի վրայ յուլիսին Հայաստանի յարձակումները կանխարգիլելու համար որեւէ քայլ չէ կատարուած, ըստաճիս օրինակներէն է»:

Հայաստանի վերաբերեալ Էրտողանի միւս անդրադարձը ՄԱԿ-ի 75-ամ-

եակին առնչութեամբ խօսքին մէջ էր: «Յուլիսին Ազրայէյանի հողերուն վրայ յարձակած Հայաստանը անգամ մը եւս ապացուցեց, որ անկախ Հարաւորեանի Կովկասի մէջ մնալուն խաղաղութեան եւ կայունութեան առջէ կանգնած մեծագոյն խոչընդոտն է: Մենք կողմ ենք, որ շրջանի տագնապները, մասնաւորաբար Լեռնային Ղարաբաղի խնդիրը վարկէտան առաջ լուծուին Ազրայէյանի եւ Վրաստանի տարածքային ամբողջականութեան, գերիշխանութեան եւ ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ-ի որոշումներուն համապատասխան»:

ԱՔՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ ՊԱՍՊԱՅԻ . . .

Շարունակուած 2-րդ էջէն

Նոյն նիստին ընթացքին որոշուեցաւ նաեւ այլ նիստ մը գումարել՝ քննարկելու համար բանտերուն մէջ տիրող իրավիճակը, յատկապէս՝ մեծ թիւով բանտարկեալներու «Ջրոնա» ժառանգ վարակուելուն լոյսին տակ: Աքր այցելեց Այն Թիւթ, ուր հանդիպում մը ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի հետ: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան լիբանանեան իրադարձութիւնները, յատկապէս երկրի ապահովական իրավիճակը: Նշենք, որ Աքր ներկայ գտնուեցաւ

նաեւ հանրագումար շինութեանց, փոխարկութեան հարցերու, ուժանիւթի եւ ջուրի հարցերու խորհրդարանական մնալուն յանձնախումբի նիստին, որուն նախագահեց յանձնախումբի նախագահ, երեսփոխան Նազիհ Լաժմ:

Նիստին ընթացքին քննարկուեցան Պէրլուօի նահանգիստի պայթումէն ետք այդ նահանգիստը վերաշինուեցնելու մարտահրաւերները, ինչպէս նաեւ նահանգիստի վերաշինութեան կարելիութիւնները:

ԹՈՒՐՔԻ-ԻՐԱՆԵԱՆ . . .

Շարունակուած Ա. Էջէն

«Թուրքիոյ հետ մեր եռակողմանի գործակցութեան հիմը Զաթարի դէմ Մեւտական Արաբիոյ եւ երեք միւս պետութիւններուն կողմէ հաստատուած պատժամիջոցներուն մեղմացումն է, եւ պիտի շարունակենք Թուրքիոյ հետ այդ ուղղութեամբ գործակցութիւնը», ըսաւ իրանեան դիւանագիտութեան պետը:

Ան նշեց, որ Իրան այդ գործակցութեան ծիրին մէջ «իր նահանգիստները կը ղնէ թուրքերուն տրամադրութեան տակ: Մեր երկիրը որինք թուրքերուն եւ քաթարցիներուն տրամադրութեան տակ, եւ ասիկա բարեկամական քայլ մըն է, եւ մենք Զաթարի մէջ մեր բարեկամներուն հետ միշտ պատրաստ ենք ամրապնդելու բարի դրացնութեան յարաբերութիւնը»:

Չարիք նաեւ յայտնեց. «Թուրքիան Սուրիոյ եւ Իրաքի պէս շրջաններու մէջ իր ներկայութեամբ չի նպաստեր իր անվտանգութեան պաշտպանութեան, այլ կը վնասէ շրջանային անվտանգութեան»:

ՊՎՔՈՒ ԶԱՅԱՐՈՎԱՅԻ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Աւելի ուշ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Չախարովա մեկնաբանեց իրավիճակը՝ խորհուրդ տալով «Իբրեւ ճշմարտութիւն ընդունիլ բացառապէս Մոսկուայի դիրքորոշումը եւ ոչ թէ այլ մեկնաբանութիւններ»:

«Ինչ կը վերաբերի նախարար Լաւրովի խօսքի մէջբերումներուն ճշգրտութեան, ապա պիտի ուզէի ձեռնարկելու իրաւիքը այդ հարցին եւ սկզբունքօրէն այդ հարցումները ուղղել այն աղբիւրներուն, որոնք տարածած են այդ տեղեկատուութիւնը», ըսած է Չախարովան չորեքշաբթի տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքին:

Արբիւրը կը նշէ, թէ Չախարովայի խօսքերէն ետք Ազրայէյանի խորհրդարանի կայքին վրայ եղող հաղորդագրութեան քննադիրը խմբագրուած է: Լաւրովի խօսքերը եակն փոփոխութեան ենթարկուած են: Փաշինեանի յիշատակումը, «հինգ գրաւեալ շըրջաններու վերադարձ»-ի եւ «խաղաղապահներու տեղակայման» մասին խօսքերը առհասարակ խմբագրուած են:

Ազրայէյանական կողմի հաղորդագրութեան վերջնական տարբերակին մէջ կը նշուի. «Սերկէյ Լաւրով Լեռնային Ղարաբաղի տագնապին առնչուած յայտարարած է, որ Ռուսիան՝ իբրեւ ԵԱՀԿ-ի Միսիսի խմբակի համանախագահ, կ'աջակցի խնդիրին լուծման եւ ջանք չի խնայեր այդ ուղղութիւն մէջ: Ռուսիան կ'աջակցի Ազրայէյանի տարածքային ամբողջականութեան»:

«ՌԻԱՇԻՆԿԹԵՆԻ . . .»

Շարունակուած Ա. Էջէն

Պատասխանելով Սալման թագաւորին Թեհրանի նկատմամբ կեցուածքներուն՝ Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց. «Ռիատի՝ Իրանի դէմ Ռաշիւնկթեյնի աջակցիւրը Մեւտական Արաբիոյ համար որեւէ արդիւնքի պիտի չհասնի, այլ զայն պիտի վերածէ արաբական երկիրներուն մէջ նուաաստ արարածի»:

Մեւտական Արաբիոյ Սալման թագաւորը մէկ օր առաջի ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովին իր ուղղած խօսքին մէջ պահանջած էր «Իրանի վրայ միջազգային ճնշումները աւելցնել»՝ նշելով. «Պիտի չտատամ սինք թագաւորութիւնը պաշտպանելու եւ պիտի չընենք մենցի ժողովուրդը, մինչեւ որ ձեռքբազաւոր իրանեան տիրապետութեան»:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Արփի Դանիէլեան
Տէր եւ տիկին Յակոբ եւ Անժելա Օհանեան
եւ զաւակը
Տէր եւ տիկին Հանրի եւ Միրելլա Սթամպուլեան
եւ զաւակունքը

Օրդ. Ալիս Դանիէլեան
Օրդ. Ժաքլին Դանիէլեան
Տիկին Մարո Դանիէլեան եւ զաւակունքը
Տիկին Եսթեր Աճեմեան եւ զաւակունքը
Տէր եւ տիկին Վաչէ եւ Ռեբեկա Կեօզուպոյեան
եւ զաւակունքը

Տէր եւ տիկին Չոհրապ եւ Արսիսէ Սթամպուլեան
Տիկին Մատլէն Օհանեան
Դանիէլեան եւ Օհանեան ընտանիքներ
Սթամպուլեան եւ Աճեմեան ընտանիքներ
Կեօզուպոյեան եւ Սարգիսեան ընտանիքներ
Երզնէի ընտանիքը
եւ համայն ազգականներ կը գումար իրենց ամուսնին, հօր, մեծ հօր, եղբոր, քեռայրի եւ հարազատին՝

ՍԵԳՐԱԿ (ՅՈՎՍԷՓ) ԳԱՆԻԷԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ հինգշաբթի, 24 սեպտեմբեր 2020-ին:

Յուզարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ ուրբաթ, 25 սեպտեմբերին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

•Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: •«Քրոնիկ» ժառ

